



ՀԱՏԸ 5 ՄԻԼԻԵՄ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

	Տարեկան	Վեցամսեայ
ԵԳԻՊՏՈՍ . . Ղ.Ո.	80	40
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՖՐ.	20	10

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐՈՒ ՕՐԳԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Շարա Ապու Տարտար, Թիւ 16
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ՀԱՍՑԷ
Journal AREV
B. P. № 600
Alexandrie, EGYPTE

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ՝ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ՍՆՈՒՆԴԻ ԽՆԴԻՐԸ

Կը խոստովանիմ թէ ո՛չ թուրքի հետաքրքրութիւնը, ո՛չ ալ «ուխտաւոր»ի ջերմեռանդութիւնն էր, որ եօթնուկէս ժամուան երկաթուղային տաժանելի ճամբորդութիւն մը աչք առնել տալով, զիս Բոր-Սայիտ մղեց։ Սուէտիացի հայ գիւղացին Կիլիկեցի հայ գիւղացիէն շատ տարբեր պիտի չըլլար, ինչպէս այս վերջինն ալ շատ տարբեր չէ ամէն տեղի հայ գիւղացիէն՝ դէմքով, հագուստ-կապուստով ու կենցաղով։ Աւազին մէջ իրենց կայքըն ալ չէր որ հետաքրքիր կ'ընծայէր զիրենք, ըստ որում այնչափ կարդացեր էինք այդ մասին՝ որ աչքովս տեսածի պէս կ'երեւակայէի արդէն տեսնելիքս։ Գալով «ուխտ»ին, կը խորհէի և միշտ կը խորհիմ թէ հեռուէն ալ մարդ կրնայ իր «ուխտը» կատարել նոյնքան ազդեցիկ և արդիւնաւոր կերպով որքան մօտէն, և այսպէս խորհելուս պատճառը այն է մանաւանդ՝ որ եթէ միայն «ուխտաւորներէն» պիտի սպասէր «չէն ու պայծառ» մնալու միջոցները՝ Բոր-Սայիտի հեռաւոր անկիւնը ինկած սրբատեղին գո՛րծ ունի չիտակը···

Անշուշտ, մեծ վտանգէն հրաշքով մը ազատած — նախ իրենց պանծալի քաջութեամբ, յետոյ՝ այս գծուծ ու շահամոլ դարուն մէջ՝ ֆրանսական հին ասպետական ոգւոյն կենդանութեանն հրա՛շքովը ազատած — այս ափ մը կտրիճ հայրենակիցները խմբովին տեսնել-դիտելու հմայքը կար և կա՛յ միշտ ու կ'արժէ որ ատոր միջոցը ունեցողները ինքզինքնին չզրկեն այդ հմայքէն որ միանգամայն հաճոյք մըն է մեր քաջերուն..., բայց ինծի համար՝ առկէ աւելի կարեւոր էր անձամբ տեսնել ու սերտել անոնց ապրուստին, կայքին, կենցաղին և հոգացողութեան պայմանները, ըստ այնմ ուղղելու համար այդ գործին մէջ մեր աջակցութեան բաժինը այս բեմէն։

Արդ, ընդ ամէնը երկուքուկէս օր անցուցի Բոր-Սայիտ, որուն գրեթէ մէկուկէսը միայն՝ Հայկ. Բանակատեղիին մէջ։ Այսքան կարճ միջոց մը կրնայ բաւական չհամարուիլ մէկու մը որ պիտի յաւակնէր ամէն ինչ տեսած և ամէն բանի դարմանը գտած ըլլալ։ Անհիկա բաւական է, սակայն, երբ նկատի առնենք գործին լայն գիծերը միայն, որոնցմէ ճիւղաւորուելով կը մեկնին միւսները և որոնց ծուռ կամ սխալ հաստատուած ըլլալը կրնայ ամբողջ գործին խախուտ ու տկար հանգամանք մը տալ։

Ըստ իս, երեք գլխաւոր խնդիր կայ Կիլիկեցիներու Բոր-Սայիտի Բանակատեղիին գործին մէջ. ա. Սընունդի, բ. Առողջութեան, և գ. Կազմակերպութեան խնդիրները, որոնք առանձին-առանձին արժանի են խնամոտ ուշադրութեանը թէ՛ հանրութեան և թէ՛ հանրային մարմիններուն։

Կազմակերպութեան խնդիրը, կարեւորութեան կարգաւ առաջի՛նը թէպէտ, բայց գլխաւոր է՛ն վերջի կը թողում, որովհետեւ ամէնէն շատ այդ մասին կան ըսելիքներ։ Կը փութամ սակայն այժմէն յայտնելու՝ թէ խօսքը Բանակատեղիին ներքին կազմակերպութեանը վրայ չէ—որ սպասուածէն աւելի գոհացուցիչ է, շնորհիւ նախ անգլիական բարձր պաշտօնէութեան և երկրորդ մինչեւ այսօր անխոնջ անձնուիրութեամբ մը աշխատող հայ տիկիններու, օրիորդներու և պարոններու—այլ անոր արտաքին կազմակերպութեանը, բուն իսկ օգնութեան գործին լարուածքին վրայ է, որ աւելի քան թերի, բոլորովին ծուռումուռ դրուած և երթալով աւելի ծանրացած է անհասկանալի անհասկացողութեամբ մը, ու դատապարտուած է մօտ օրէն ամբողջապէս փլչիլ-քայքայուելու՝ եթէ իսկոյն փոյթ չտարուի զայն հաստատելու անկեղծ ու շիտակ հիմերու վրայ՝ որոնցմով միայն կրնայ կանգուն ու հաստատուն մնալ ո՛և է բարեգործական ձեռնարկ։

Կ'անցնիմ սակայն Սնունդի խնդրոյն, որ աս ալ, այլապէս հարկեցուցիչ առաջնութիւն մը ունի։

*
* *

Անմիջապէս ըսեմ, հիմնուելով առնուած բոլոր վաւերական տեղեկութիւններուն վրայ, թէ Հայկ. Բանակատեղիին մէջ քաջառողջ այրերուն ու կիներուն, չափահասներուն և մանուկներուն միանգամայն՝ տրուած սնունդը խստիւ անբաւական է։

Թո՛ղ չկարծուի թէ այսպէս մտածողները քաղաքացիի աչքով կը նային հարցին վրայ ու կ'ուզեն խորտիկներ, համադամներ մեծարել տալ այս մեծ մասամբ հուժկու լեռնորդիներուն, որոնք ատոր արժանի թէպէտ՝ բայց այդ տեսակ բան մը չեն պահանջեր մենէ։ Անոնք ինչ որ կ'ուզեն, կ'զգացնեն աւելի՝ սա՛ է թէ իրենց ուժն ու առողջութիւնը պահելու չափ սնունդ մը տրուի իրենց, քանի որ կ'զգան թէ հիմակուան տրուածը զանոնք աստիճանաբար պակսեցնելու վրայ են իրենց մէջ, ըստ որում ստուար մեծամասնութեամբ անօթի կը մնան կոր այդքանով։

Այս յայտնութիւնը կամ հրապարակումը ընելով հեռու եմ այդ սնունդը մատակարարող անգլիական իրապէս գարեխնամ իշխանութիւններուն ամենափոքր մեղադրանք մը ուղղելու մտքէն։ Կը կարծեմ նոյն իսկ, թէ իրենց փափաքին համաձայն չարժած կ'ըլլամ այսպէսով՝ քանի որ իրենք իսկ յայտարարած են քանիցս թէ գիտեն տրուած սնունդին անբաւական ըլլալը, բայց կը ցաւին որ չեն կրնար ներկայիս առկէ աւելին ընել և կ'սպասեն որ Եգիպտոսի հայ բարգաւաճ գաղութը լրացնէ իրենց պակաս թողածը... Արդ, ահաւասի՛կ քանի մը թիւեր ու տեղեկութիւններ որոնք ամենէն սրտայոյզ ճառէն աւելի պերճախօս են այս մասին։

Իւրաքանչիւր չափահաս մարդ կ'առնայ օրական 3 պզտիկ հաց, իւրաքանչիւրը մօտ 60 դրամ կըշռող. 14 տարեկանէն սկսեալ մինչեւ 4 տարեկանները՝ կ'առնեն մէկուկէս հաց միայն, իսկ 4 տարեկանէն անդին՝ 1 հաց։ Այս հացին հետ կը տրուի ամէն օր, բաց ի առաւօտ երեկոյ մէկմէկ գաւաթ թէյէ որուն մասին յայտնուած գանգատները հոս զանց կ'առնեմ յիշելու, մարդ գըլուխ օրը մէկ անգամ, կա՛մ մէյ մէկ շերեփ ապուր (ոսպի, բրինձի և երբեմն մսի), կա՛մ պանի՛ր և կամ ձիթապտուղ։ Պանիրին քանակութիւնը կրնայ հետեւցուիլ ձիթապտուղին քանակէն՝ երբ ըսեմ թէ այս վերջինէն իւրաքանչիւրին ինկած բաժինը 7 հատ ձիթապտուղ է միայն, ինչ որ պիտի կազմէ իր կէս օխայէն պակաս հացին հետ՝ ամբողջ մէկ օրուան ուտելիքը այս ամէն մէկ կայտառ լեռնցի երիկմարդուն ու կնոջ...։ Հապա՛ տասներչորս և անկէ վար տարիք ունեցող տղոց — որոնք իրենց հայրերուն և մեծ եղբայրներուն քովն ի վեր այնպէ՜ս լաւ աշխատած են պատերազմի միջոցին — ախորժա՛կը՝ որ մեծի մը ախորժակէն պակաս չէ բայց սակաւ ուտած է անոր տրուած հացին կէսովը միայն գոհանալ...։ Առանց ուրիշ մանրամասնութիւններ թուելու, այսքանը կը բաւէ, կարծեմ, որ փողկապ, վզնոց և տեսակ-տեսակ անգործածելի զգեստներու առաքումով անուննին թերթերու մէջ կարդալ փափաքողները — ինչպէս նաեւ միւսները — ցնցուին և եթէ կ'ուզեն իրապէս օգտակար ըլլալ՝ ըստ այնմ բաներ մը ընեն։

Ստնտու մայրերու և տկարակազմներու համար հաստատուած խոհանոցը լա՛ւ է, բայց նախ՝ ամէն մարդ չի կրնար, անկէ օգտուելու համար, նոր զաւակ մը ծընանիլ անմիջապէս—մանաւանդ էրիկ-մարդիկը ընաւ չեն կրնար կարծեմ—և երկրորդ՝ սպասել որ նախ բոլոր առողջները տկարանան որպէսզի վերջէն բաւարար սնունդ մը տանք իրենց, սքանչելի՛ շահագիտութիւն մըն է մարդկային կեանքին վրայ, քիչ տարբեր բամպակի, ցորենի կամ բրինձի վրայ շահագիտութենէ...։

Առաջնորդարանը և ազգ. իշխանութիւնները, ըլլա՛ն Գահիրէի թէ Աղեքսանդրիոյ, մեզի թոյլ կուտան, կը յուսանք, որ առանց կանխաւ իրենց հաւանութիւնն առնելու՝ Եգիպտահայ ժողովուրդին — զգացումէ և դատողութենէ զուրկ չեղող ժողովուրդի՛ն—ուշադրութիւնը հրաւիրենք այս այնքան կենսական հարցին վրայ։ Վերջապէս իրենց ապրանքը չեն սա՛ մարդիկը՝ որոնք պատուաւոր կռիւէ մը յետոյ եկան ինկան այստեղ իրենց կիներով ու տղաքներով, և որոնց փորը չի կշտանար ո՛չ շաքարով ո՛չ ալ անուշ խօսքով։ Իրենց ապրանքը չե՛ն, կ'ըսենք, որպէսզի ուզածնուն պէս ձեռքէ-ձեռք, մէկէն միւսին անցընեն զանոնք՝ իբրեւ նուէր կամ իբրեւ շնորհուկ...։ Եւ թո՛ղ չըսուի թէ այս գաղթականները պէտք է ինքզինքնին երջանիկ համարին ազատած ըլլալնուն համար, թէ Կովկասի մէջ հազարներ մեռան անօթութենէ ու հիւանդութենէ...։ Ամօ՛թ է ասիկա։ Կովկասը չի կատարեց իր պարտքը կամ չկրցաւ՝ որովհետեւ 3-400,000 հոգի մէկ անգամէն ունեցաւ իր թեւերուն վրայ։ Մերինները 4200 են միայն, ընդ ամէնը 4200, որոնց հոգացողութեան ալ մէկ մասն է միայն որ մեզի ձգուած է։ Այդ մասը անհրաժեշտ մաս մըն է սակայն, անհրաժե՛շտ մե՛ր պատիւին ու անո՛նց առողջութեանը պահպանումին համար...։

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ԴՐՈՒԱԳՆԵՐ
ՍՈՒԷՏԻԱՅԻՆ ՓՐԿՈՒԹԵՆԷՆ

I

ՔԱՋԻ ՄԸ ԾՈՎԱԹԱՂՈՒՄԸ

Մուսա Լերան պատերազմիկներուն վերջին խումբը նաւ առնուեցաւ, և զիրենք դէպ ի ազատութեան աշխարհը տանող փոխադրանաւէն ուրիշ ոչինչ կ'երեւնայ այլ եւս՝ բայց եթէ ծուխի սպիտակ դարդմանակ մը հեռո՛ւն երկինքին մէջ։ Վերջացա՛ւ այդ բոլոր շարժումը. վերջացա՛ւ նաւակներուն ծովեզերք երթալ-գալը. վերջացան կիներուն և տղաքներուն անձկոտ ճիչերը. վերջացա՛ւ հերոսներուն մաքառումը...։ Մեր մարտանաւին վրայ չորս վիրաւորեալներ միայն կը մնան մեզի, և այն պահուն ուր իրենց այցելելու կ'երթամ հիւանդանոցը, ինծի իմաց կուտան թէ իրենցմէ մէկը՝ Ցաքէթ Վանեան, մին ամենէն կտրիճներէն Մուսա Լերան փոքրաթիւ ասպետներուն, փչած է իր վերջին շունչը՝ ընկճուելով չորեւոր փտախտէն (gangrène gazeuse) որ երէկուընէ ի վեր զինքը կ'ուտէր արդէն...։

Բայց ծովին վրայ ենք։ Կանոնը բացորոշ է. պէտք է անմիջապէս ծովաթաղումի գործին ձեռնարկել։ Պատրաստել կուտամ իր մահուան վկայագիրը, որմէ յետոյ իսկոյն պիտի կատարուի արարողութիւնը։ Վանեանը պիտի թաղուի ֆրանսական զինուորի մը նման։

Նաւապետութիւնը փոխած է իր հագուստները։ Հրացաններուն բունը գետնին կոթնցուցած՝ զինուորները որ պաշտօն ունին վերջին պատիւները ընծայելու, կը յառաջանան փողահարներուն հետեւէն և կը կենան՝ եզերքը ծովուն։ Հրամանատարին ետին կանգնած են նաւուն բոլոր սպաները, ամէնքն ալ իրենց պաշտօնական զգեստներով։ Քիչ վերջը կ'երեւայ, մեր նաւաստիներուն ուսին վրայ բարձրացած և եռագոյն դրօշակով փաթթուած, այն կտաւէ պարկը որ տարաբախտ երիտասարդին մարմինը կը պարունակէ...։ Վայրկեանը խորապէս յուզիչ է....

Արեւը լոյսով կ'ողողէ այս տեսարանը, և ծովը, ամենագեղեցիկ օրուան մը հանդարտութեամբ, կը պսպղայ արծաթէ ճառագայթներուն խաղատանքովը։ Փողահարները բարեւի եղանակը կը հնչեցնեն։ Զէնքերը բազուկներուն ծայրն են։ Սպաները և նաւապետը, անձայն, զինուորական բարեւը կուտան երբ «Սթափ կեցէք»ի հրամանը կը տրուի։ Մարմինը կը սահի յուշիկ, և կ'իյնայ... Ծովը կը փրփրի քիչ մը, և յետոյ նախկին հանդարտութիւնը կը տիրէ...։ Արարողութիւնը վերջացած է. մեքենաներու հռնչիւն մը, և կը շարունակենք մեր անստոյգ արշաւը՝ անհուն յարաշարժ գերեզմանին վրայ...։

Անոր խորութիւններուն մէջ, ծովաւեզերուն մէջտեղ որոնք նաւազներու գամբիններն են, խառնուած այնչա՛փ ուրիշներու հետ՝ հանգչէ՛ խաղաղութեամբ, ո՛վ պզտիկ հայ գիւղացի։ Թուրքը պիտի չկրնայ գոնէ քու գերեզմանդ պղծել....

Սեպտ. 1915

ՏԻՐԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ԱՂԷՏԻ ԵՒ ՏԱՌԱՊԱՆՔԻ
ԱՇԽԱՐՀԻՑ

(Այց թիւրքահայ փախստականներից)

II

Վերջին ամիսների ընթացքում ողողւում էին հայ թերթերի էջերը հեռագիրներով ու յօդուածներով գաղթականական յախուռն հոսանքների մասին։ Էջմիածինն այն ձգողական կենտրոնն էր անսպասելի և փրկութեան շիւղ որոնող մասսաների համար, ուր խմբւում, լճանում էին նրանք և ապա հետզհետէ ցրւում զանազան գաւառներ։ Սակայն տեղի ունեցող սրտաճմլիկ տեսարանների մասին անկարող էին հեռաւոր ընթերցողները որևէ ճիշդ գաղափար կազմել, թէկուզ նկարագրողը լինի մի Զօլա, և ոչ լրագրական հասարակ մահկանացու։ Լուսանկարչական ճշգութիւնն անգամ չի կարող հաղորդել կատարւող ողբերգութեան ամբողջական պատկերը։ Այն, ինչ տեսել եմ ես Էջմիածնում խմբված փախստականների կեանքից օգոստոսի 23ից ի վեր, համարւում է ըստ իմ ուղեցոյցների վկայութեան, շատ մեղմացած, միայն թոյլ շարունակութիւնը այն զարհուրելի, աննկարագրելի անցեալի, որ ունեցել է փախստականների հոսանքի սկզբնական շրջանը։

— Չէք կարող երևակայել —, ասում էին նրանք, — թէ ի՛նչ տեսարաններ ենք մենք ականատես եղել 2—3 շաբաթ առաջ. մարդ կարող էր գժվել այդ բոլորի հանդէպ. դա մի չը տեսնված ու չլսված կոշմար էր։

Եւ այնուհետև պատմում էին ինձ սրտակտուր տեսարանների մասին այնպիսի մանրամասներ, որոնց չէի ուզենայ հաղորդակից անել ընթերցողներիս (*)։

Սակայն այն, ինչ ես եմ տեսել ու զգացել փախստականների կացութեան ա-

(*) Մի փոքրիկ, բայց վերին աստիճանի բնորոշ մի դէպք հաղորդեց, որ պատմել է ինձ Մոսկվայի կոմիտէի գործող յանձնախմբի կառավարիչը: Նա բազմիցս խօսել է վանքի շրջանում խմբված փախստականների մէջ մի համակրելի ընտանիքի հետ, բաղկա-

ւելի մեղմացած չրջանում, այնքան զարհուրելի է ըստ ինքեան վերցրած, որ իմ երեւակայութիւնը չի կարողանում դրանից աւելի վառ, թշուառ վիճակ պատկերացնել։

Ես սանտիմենտալ լինելուց շատ եմ հեռու. դա կը վկայեն իմ երկար տարիների ընթերցողները։ Բայց ես, միաժամանակ, բրազգաց չեմ և չեմ կարող խոսքը կսկիծով չը յուզվել, երբ տեսնում եմ, որ մարդկային սեռի տասնեակ հազարաւոր ներկայացուցիչներ, ժողովրդական հոծ բազմութիւններ դատապարտված են անասնական վիճակից աւելի ստոր դրութեան։

Այո՛, անասնական վիճակ, այն էլ ոչ եւրոպական հասկացողութեամբ և եւրոպացու խնամատարութեան ենթակայ, այլ ասիական խաշնարածների և տաւարածների հսկողութեան տակ։

Ընդունեցէք, ընթերցող, որ սա չափազանցութիւն չէ, այլ տխրագոյն իրականութեան, անագորոյն վիճակի դառնագին խոստովանութիւն։

Տեսե՞լ էք ձեր կեանքում արեւահար եղած ոչխարի հօտ, որին պարտաճանաչ հովիւը հրհրելով բերում, խմբում է տերեւախիտ ծառերի տակ, հովասուն շուքի մէջ հանգստացնելու համար։ Այո՛, տեսել էք։ Բայց տեսե՞լ էք, ասացէք խնդրեմ, օրերով ու շաբաթներով ամառվայ կիզիչ ճառագայթների տակ, քարերի և սև հողի վրա փռված հազարաւոր ընտանիքներ խաշվելիս ու տառապելիս։ Եթէ չէք տեսել, արի՛ք Էջմիածին։

Տեսե՞լ էք դուք բեռից յոգնած, չոփից նուաղած, աշխատանքից կեղտոտված, լեզուն հանած և փրփուրը բերնին հեւալիս գոմէշներ, որոնց պահապանը շտապով տանում է գետի կամ լճի մէջ և խնամքով զովացնում ու մաքրում նրանց մարմինը։ Այո՛, տեսել էք։ Բայց տեսե՞լ էք միթէ, որ մարդիկ ամիսներով պարուրված ցնցոտիների մէջ առանց լուացվելու և փոխնորդի, գիշեր-ցերեկ մեխված միեւնոյն քարի կամ հողակտորի վրայ՝ եղունգներով քերելիս լինեն իրանց կաշիները և անխնայ մաքառելիս ուտիչ միջատների դէմ։ Եթէ չէք տեսել, համեցէ՛ք Էջմիածին։

Տեսնվա՞ծ բան է, որ մութ գիշերին, առնացող քամու կատաղած քմահաճոյքներին գերի թողնէ տէրը իր «չորքոտանիներն» և ինքը հանգիստ քնէ իր յարկի տակ։ Ոչ, այդպէս չէ վարվում Ղարաբաղի և Ապարանի վերջին գիւղացին անգամ։ Բայց եղա՞ծ բան է, որ բազմանդամ և բազմաթիւ ընտանիքներ, կին ու տղամարդ, ծերեր ու երեխաներ գիշերը դեռնաստղած փռվեն բաց երկնքի տակ այն ժամանակ, երբ զիլ քամին քուլայ-քուլայ փոշու կոյտեր է թափում նրանց վրայ և ապականում օդը։ Այդ էլ տեսանք փոշաոստ Վաղարշապատում։

Բայց այժմ ինքներդ հարցրէք, համբերատար ընթերցող, թէ ի՞նչ են անում, ինչպէս են դատաւորում իրանց թշուառ վիճակը 30—32 հազար բացօթեայ ապրող փախստականները, երբ բռընկվում է երկարատեւ, յորդահոս անձրև, մանաւանդ գիշերը։ Այդ հարցով դիմեցէք դուք Էջմիածնի վարիչ մարմիններին և լսեցէք, թէ ի՞նչեր կը պատմեն ձեզ։

Անցնում եմ առաջ, հետեւեցէք ինձ։ Մտնում եմ նախ ճեմարանի բակը արեւելեան դռնից։ Աչքի առաջ բացվող ամբողջ տարածութեան վրայ՝ խիտ խիտ փռված են գնացքին փախստական ընտանիքները. ճեմարանի միւս կողմը, ամբողջ պարտէզը՝ նոյնպէս. ինքը ճեմարանի շինութիւնը՝ իր բոլոր բաժանմունքներով լիքն է փոքրիկ երեխաներով։ Ճեմարանի ձախ կողմը գտնվող զանազան շինութիւնները դարձել են զանազան սեռակի հիւանդանոցներ փախստականների համար։ Անցնում եմ վանքի բակը. ընդարձակ տարածութիւնը ամբողջապէս բռնված է փախստականներով. անգամ վանքի և վեհարանի պատերի տակ, մինչև միաբանների բնակարանների դռները, ամենուրեք չարված են փախստականները։ Ահա և Ներսիսեան լիճը, որի չորս բոլորքը և նրանից հեռու տարածվող անտառը բռնված են փախստականներով։ Անտառում են գտնվում սանատորիան և ամբուլատորիան։ Ու այժմ մի կողմն ենք թողնում գիւղում տեղաւորված փախստականները և երկու որբանոցները։

Սարսափելի են ամենուրեք ստացած տպաւորութիւնները։ Յոգնած ու նուաղած, կիսամերկ ու կիսաքաղց, գալկացած դէմքով, կմախքացած մարմնով փռված են նրանք կեղտոտ լաթերի վրա. ճակատի կնճիռների վրայ հոգեկան տառապանքի կնիքն է դրոշմված. տխուր աչքերի մէջ կարդում էք անօրինակ աղէտի պատմութիւնը։ Մէկը քնած է, միւսը մռայլոտ դէմքով յառում է գետնին, երրորդը ցաւից ծանր հոգոց է քաշում, չորրորդը հոգեվարքի ցնցումներով գալարվում է մահվան ճանկերում։ Հինգերորդն արդէն դիակնացած ընկած է։ Մի տեղ հիւանդ երեխայի մայրը գորովագութ փայփայանքով հանգստացնում է իր տանջվող զաւակին և լալով աղերսում անցորդին բժշկական օգնութիւն։ Միւս տեղ, վանքի գլխաւոր մուտքի դրանը չոքած, պառաւ կինը քարերն է համբուրում և անդադար աղօթում՝ արտասվելով ու մրմնջալով։ Երրորդ տեղը մի կին հեծում, կոծում, «վա՛յ» «վոյ» վայնասունով իր կուրծքն է ծեծում, ծնկներին զարկում՝ իր հարազատների կորուստը ողբալով (երկու օրվայ մէջ մեռել էին Էջմիածնում նրա ամուսինը, ամուսնացած որդին և փեսան, թողնելով դժբախտի գլխին մի չարք որբեր)։

Ու այսպէս անվերջ. ո՛ր մէկը թւեմ. անհատնում և բազմազանի տեսարանների մի կալէյդօսկոպ է դա, մէկը միւսից զարհուրելի։ Էջմիածնում իմ ծանօթները հաւատացնում էին, որ մի երկու օրվայ մէջ այնքան կը բթանան զգացմունքներս, այնքան կ՚ընտելանամ աղէտի մթնոլորտին, որ այլ ևս ոչինչ չեմ զգայ։ Բայց երկու օրը դարձաւ մի չաբաթ և աւելի, բայց ես չկարողացայ բթանալ սրտաճմլիկ տեսարանների հանդէպ։ Օրվայ բոլոր ժամանակներին՝ մինչև գիշերվայ ժամը 12ը, պտոյտ եմ տըւել վանքի և ճեմարանի բակերում և ամէն անգամ գրեթէ ականատես եմ եղել նոր տեսարանների, լսել եմ նոր աղեկտուր ձայն, նոր տնքոց ու հոգոց, նոր վա՛յ ու վո՛յ...

Տիրապետող գաղափարը, որ կենտրոնանում է ձեր մտքում՝ ստացած ճնշող տպաւորութիւնների ընդհանուր կապակցութեան մէջ, այն է, որ փռված ու մեքած փախստականների այդ խառնիճաղանճ բազմութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ անձայրածիր բժուառ զոհերի մի ազաւանդակ, որի օբիեկտները, կարծես միայն մահվան կանդիդատներ են յաջորդական կարգով։

Այդ տեսակէտից ամենացնցող տըպաւորութիւնը թողնում է այցելուի վրա փախստականների՝ այսպէս անուանված՝ դիակատունը։ Բռնազբօսիկօրէն չէ, որ թխում ու գործ ենք ածում այդ բառը, այլ հիմք ունենք դրա համար։ Վերջին ժամանակներս այնպիսի մեծ չափեր են ընդունել փախստականների մահվան դէպքերը, ինչպէս յետոյ կը տեսնենք, որ օրվայ մեռածները չէին թաղում նոյն օրը, այլ օրերով կուտակվում էին դիակները բացօթեայ, դառնալով դիականոց։ Գերեզմանափորները չէին կարողանում հասցնել։ Երբ օգոստոսի 29ին, չաբաթ օր, երեկոյեան հոգով գնացինք անտառի ծայրը՝ դիակները դիտելու, փոքր տարածութեան վրա խիտ դասաւորված էին ոչ պակաս քան 600 դիակներ։ Ըստ գերեզմանափորների ասածի, կային դրանց մէջ այնպիսիները, որ մեռել էին մի չաբաթ առաջ և արդէն խեղդիչ հոտ էին արձակում։

Վեց հարիւր թափթփված դիակներ... Հասկանում ենք դիակների կոյտերը ռազմի դաշտում. բայց չենք հասկանում պատերազմի վայրից փախած, կոտորածների վտանգից փրկված ժողովրդի մասսայական մահացութիւնը և դիակների կոյտերը Արարատեան ազատ դաշտում...

Ահա ո՛րն է փախստականների կեանքի ամբողջ տրագիզմը. ահա ինչո՛ւ բացառիկ են հայ փախստականների կացութեան պայմանները և ինչո՛ւ իրաւունք ունեն նրանք նախանձելու լեհ և բէլգիացի փախստականներին։

(Մշակ Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

ցած հօրից, մօրից եւ մի որդուց, նրանց մխիթարել, սիրտ է տուել շարունակել։ Բայց ահա անցնում է նա մի օր նոյն բնակիչի մօտով եւ տեսնում է, որ հայրը մեռել է, իսկ մայրը պատան է կարում իր ամուսնու համար։ Պարոն կառավարիչը խօսում, հանգստացնում է դժբաղդ կնոջը։ Բայց ահա անցնում է նա մի այլ անգամ եւ տեսնում է որդին մեռած, իսկ մայրը պատան է կարում իր զաւկի համար. թել չունենալու պատճառով նա հանում է իր գլխից մազեր եւ դրանցով կարում իր որդու պատանը։ «Այդ տեսարանն ինձ այնպէս ցնցեց, որ ես չկարողացայ այլեւս մօտենալ այդ դժբաղդ կնոջը, այլ հեռացայ եւ ինձ հետ պատահեց հիստերիկա». այս խօսքերով փակեց Պ. կառավարիչը իր աղեխարշ պատմութիւնը։ Պատան կարե՜լ իր հարազատ ամուսնու եւ որդու համար, այն էլ իր գլխի մազերով...

ՓՐՑՈՒԱԾ ԷՋԵՐ

ՏԱՐՏԱՆԷԼԵԱՆ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՆ

ԺԲ.

Ամպամած առտու մըն է։ Երկինքը տխուր է ու կուլայ։ Ֆրանսական «Մերսանտէս» շոգենաւը կը մեկնի Լէմնոսի ծովախորշէն։ Նաւուն առաջամասին վերայէն կը բարեւենք Ֆրանսացի նաւաստիները ու կը գոչենք բարձրաձայն՝ «Կեցցէ՜ Ֆրանսան»։ Ի պատասխան՝ «Կեցցէ՜ Անգլիան, կեցցէ՜ն Դաշնակիցները» կը գոռացնեն անոնք։

Թարգման ընկերներէս մէկն՝ Յ...ը, չափազանց կը տխրի։ Կը հարցնեմ իր այս տարապայման տրտմութեան պատճառը.

«—Մերսանտէ՛ս...» կը մրմնջէ ան, և կը հասկնամ թէ անուշ ու դիւթական անուն մըն է անիկա բարեկամիս համար, որ խորտակուած սիրոյ մը ամբողջ պատմութիւնը կը վերյիշեցնէ իրեն...

Մերսանտէ՛ս... Երիտասարդ ու բանաստեղծ բարեկամս սիրեր է զինքը անտնօք, մաքուր ու հզօր սիրով մը, սակայն անողոք ճակատագիրը խզեր է այդ երկու երջանիկ հոգիներուն կապը և անդարձ բաժներ է զանոնք իրարմէ....

«Մերսանտէս» շոգենաւը անհետ եղած էր արդէն ծովածոցէն, ու իմ սրտակից բարեկամս տակաւին կը շարունակէր իր մելամաղձոտ պատմութիւնը, զոր մերթ ընդ մերթ կ՚ընդմիջէր միայն իր բանաստեղծութեանց հատորէն՝ «Աչուղի Կարօտներ»էն վերյիշուած կտորի մը արտասանութեամբ....

* * *

Ցերեկ է։ Երկնքին ամպերը փարատեցան. պայծառ արեւ մը կայ հիմա։ Զինուորական քարոզիչին հետ ցամաք կ՚ելլենք՝ շրջակայ գիւղերը պտոյտ մը կատարելու համար։ Քարոզիչը ծաղիկներու սիրահար մէկն է, որ, արտերուն մէջ ինկած՝ անընդհատ ծաղիկներ կը քաղէ ու ինծի երկարելով, մի առ մի անոնց անունները կուտայ։ Կէս ժամուան հեռաւորութիւն ունեցող գիւղ մը երկու ժամէն կը հասնինք այսպէս, մերթ արտերէն ծաղիկներ հաւաքելով և մերթ ճամբուն եզրը նստած՝ տեսակ-տեսակ նիւթերու շուրջ խօսակցելով։ Քարոզիչը Շէյքսփիրէն, Պայրընէն, Շէլլէն ու Բուռնսէն Քէփլինկէն գեղեցիկ քերթուածներ կ՚արտասանէ։ Ես ալ իրեն կը խօսիմ անգլիացի ուրիշ դասական հեղինակներու մասին։ Մեծ կ՚ըլլայ իր հիացումը երբ կը յիշեմ դժբախտ Օսքար Ուայլտի մէկ քերթուածը։ «Սակայն դուք ո՞ւր կարդացիք այսքան բաներ», կ՚ըսէ ինծի քարոզիչը։ Մեր խօսակցութիւնը քիչ մը տաք ու վիճաբանական ձեւ մը կ՚առնէ երբ կը բաղդատենք անգլիական գրականութիւնը Ֆրանսականին հետ, մին գովելով կամաց կամաց յուզող, իսկ միւսը մէկէն խանդավառող ու կրակ տուող։ Երկուքնիս ալ գեղեցկութիւնները կը թըւենք, թէպէտ երբեմն իրարմէ տարբեր տեսակէտներով։

* * *

Ռուսօրուլօ գիւղին ճիշդ մօտն ենք։ Ցորենի արտի մը մէջ երկու փոքրիկ յոյն դպրոցական լամուկներու կը հանդիպինք, որոնք պայուսակնին վզերնին անցուցած, ծաղիկ կը հաւաքեն մեզի պէս։ Զինուորական քարոզիչը կը թելադրէ ինծի որ այդ կուտդ-գլուխները քիչ մը քովերնիս կանչենք ու խօսինք։ Անոնք վարանոտ քայլերով կը մօտենան մեզի։

— Ո՞ւր է գիրքդ, բա՛ց նայինք ու կարդա՛... կ՚ըսէ քարոզիչը տարիքով պզտիկին։ Ու հելլէն լամուկը կ՚սկսի կարդալ հետեւեալ տողերը. «Օ Անտրէաս իբանէ գալօ փետի» (Անդրէաս լաւ տղայ մըն էր... ևն.)։

Քարոզիչը մէյմէկ շիլին կը թխմէ անոնց ձեռքին մէջ ու գիւղին ճամբան ձեռք կ՚առնենք կրկին։ Տասը վայրկեան վերջը գիւղ կը հասնինք, ուր սըրճարանի մը մէջ մեր ցերեկուան ճաշը կ՚ընենք հաւկիթով ու թէյով։

Սրճարանին մօտ, տան մը բակին մէջ, հելլէն կին մը, բեզկեաննին առջեւ անցած, կտաւ կը գործէ։ Քարոզիչը շատ կը հետաքրքրուի ու փափաք կը յայտնէ որ երթանք տեսնենք արեւելքի այդ միջնադարեան գործիքը։ Հելլէն տիկինը մեղմիւ կը բարեւէ մեզ, մինչ իր մանկատի աղջիկը երկու փունջ ծաղիկ կը բերէ ու կ՚ըսէ.

— Դեռ լաւ չեն ծաղկած, սակայն շատ անուշ կը բուրեն։

Ու իր արեւելքցի աղջկան ամօթխած դէմքը կը շառագունի մէկէն. աչքերը հալէ փախստեայ ակնարկ մը կը ձգեն մեր վրայ ու գետին կը նայեն խոկուն։

Բովի նպարավաճառ հելլէն երիտասարդը կը մօտենայ մեզի ու իր թափթփուք անգլիերէնովը կ՚ըսէ.

—Պարո՛ններ, հոս տուն է, լաւ է որ դուրս ելլէք. տունը օտարականներ չեն կրնար մտնել երբ այր մարդը հոն չի գտնուիր։

—Ի՞նչ կ՚ըսէ այս երիտասարդը..., կը հարցնէ ինծի զինուորական քարոզիչը, չկարենալով հասկնալ պարոնին աղաւաղեալ անգլիերէնը որ անգլիերէն ըլլալէ զատ ամէն ինչ է։

—Կ՚ըսէ որ տունէն դուրս ելլենք վասնզի տունին այր-մարդը հոս չէ եղեր։ Արեւելքցիները սանկ տարօրինակ սովորութիւններ ունին։

Զինուորական քարոզիչը վայրկեան մը կը մտածէ ու առանց բառ մը արտասանելու ոտքի կ՚ելլէ։ Գիւղին աղբիւրէն ջուր կը խմենք ու կը մեկնինք ուրիշ գիւղ մը երթալու համար։

Գիւղին մօտ, թզենիի մը շուքին տակ, զառամեալ ծերունի կին մը նստած է, իր շուրջ հաւաքած թոռները, որոնց բաներ մը կը պատմէ։ Իննսունամեայ պառաւը մեզ տեսնելուն բաներ մը կը մրմնջէ քթին տակէն. քարոզիչը կարգ մը հարցումներ կ՚ուղղէ իրեն ու ես թարգմանաբար կը խօսիմ հետը։ Պառաւը երիտասարդի մը պէս կը պատասխանէ, դեռ չի մարած աչքով ու ձայնով։ Քարոզիչը երկու շիլին կը դնէ այս ծերունիին ալ ափին մէջ ու մեկնելու պահուն կ՚ըսէ. «Մայրի՛կ, աղօթէ՛ Աստուծոյ մեր զինուորներուն համար»։ «Այո՛, որդեա՛կ, ես միշտ կ՚աղօթեմ» կ՚ըսէ ծերունի յոյն կինը ու կ՚սկսի մրմնջել իր յաւիտենական յանկերգը.

—Քիրէ՛ լէիսօ՛, Քիրիէ՛ լէիսօ՛...

* * *

Վարը, Մուտրոսի ծովախորշին մէջ դաշնակից նաւերն ու զրահաւորները արեւուն ոսկեգոյն ճառագայթներուն տակ կը փայլփլին։ Գարնան անուշ զեփիւռ մը կը սաւառնի գիւղին բլրակներուն վրայ։ Ցորենի հասկերը կը տատանին հոս ու հոն՝ զեփիւռին գգուանքներուն տակ։ Հեռուն բլրակի մը կատարը հնամենի հովմաղացքները Տօն Քիշօթի ակամայ ասպետներուն յիշատակը կ՚արթնցնեն։ Անդին, ծովափին ժայռերուն վրայ, Եգէական ալիքներուն անհալուր շառաչումը կը լսուի։

Մուտրոսի մօտերն ենք հասած։ Ֆրանսական նաւային զինուորներ կ՚անցնին մեզմէ քիչ հեռու արտի մը մէջէն։ Անոնք ալ պտոյտի ելած են մեզ պէս։ Զինուորներէն մին թէնօրի աղուոր ձայնով մը կ՚երգէ Մօղէֆի «Ի զուր Փարաւոն» երգը։

—Կեցի՛ր քիչ մը հանգչինք հոս ու մտիկ ընենք սա՛ Ֆրանսացի զինուորին երգը... կ՚ըսէ քարոզիչը, ու կը նստինք մարմանդեայ օթոցի մը վրայ ու հիացումով մտիկ կ՚ընենք արուեստի ու գեղեցկութեան երկրին՝ Ֆրանսայի զաւակին անուշ ու թրթռուն երգը...։

Յ. Հ. ԹԸՓԸՐԵԱՆ

ԿԻԼԻԿԵՑԻՆԵՐԸ ՊՈՐ-ՍԱՅԻՏԻ ՄԷՋ

(Սեփական թղթակցութիւն)

1 Նոյ. Երկուշաբթի

«Քէմբ» հասնելնուս՝ Ամերիկայէն հասած նամակներու տրցակ մը կայ բաժնուելիք։ Նամակ ստացողներուն խնդութիւնը չափ ու սահման չունի։ Առանց որոշ հասցէի, «գաղթականներուն ուղղուած» մէկ երկու նամակներ կան, զորս ստորագրողները պաղատագին լուր կը խնդրեն, որոշ լուրեր, իրենց ըսող թէ որո՛նք ազատած, որո՛նք գաղթած են և որո՛նք մնացած են իրենց ընտանիքներէն։

Քեմբի հրապարակին վրայ, հոս ու հոն, խումբեր ամէն սեռէ և տարիքէ, ամենայն երկիւղածութեամբ անոնց ընթերցումին մտիկ կ՚ընեն։ Մաս մը տխուր, մաս մը գոհ, մաս մը տժգոհ արտայայտութիւններ ունին, բայց անոնց գրեթէ ամենուն աչքերն ալ խոնաւցած են։ Կ՚իմանամ թէ մէկը նոյն իսկ իր ընտանիքին քանի մը ոսկինոց չէք մը ղրկեր է, սակայն ընտանիքը «գաղթած» ըլլալուն համար, չէքը վերադարձնել հարկ կ՚ըլլայ։ Ինչպէս կարելի է չարտասուել նմանօրինակ պարագաներու առջև...։

Գիւղերուն մէջ Բիթիասն է՝ Ամերիկայէն ամենէն աւելի յուսադրուողը։ Վրաններու և թաղերու շուրքին մէջ ալ, դիպուածին բերումով առաջինը եղած է ան, A և B բաժանումները ներկայացնելով։ Տիկ. Էկլուտ ևս դիտած էր այս պարագան և օր մը նմանօրինակ «մեր London west»ը, Լոնտոնի էն հարուստ թաղը կոչեց զայն, «London East»ը ըլլալով էն աղքատ թաղը ուր կը գըտնուի համբաւաւոր «whitechapel»ը։ Ու իրաւ ալ, մեր Բիթիասի հակոտնեան՝ ուրիշ խօսքով A և Bին դէմ վերջին գիւղական բաժանումները՝ R և S, մեր էն աղքատիկ թաղերն են։

—Նախընթաց օր դպրոց այցելեցին Major Liddle, պետական հսկողի ընդհ. քննիչը և Mr. Peckitt, պետական երկաթուղիներու մեքենական պետ-երկրաչափը, ընկերակցութեամբ երկաթուղիի պաշտօնեաներէն Պ. Պօղոս Սէլեանի, որ իր պաշտօնին բերմամբ՝ ժամանումներու և այլ կարգի գործերու մէջ մեծ ծառայութիւններ կը մատուցանէ, մինչ իր եղբայրը՝ Պ. Սէլեան, իր ամսուան մը արձակուրդը Քեմբին մէջ աշխատելով անցուց,—արձակուրդ մը վատնելու ամենէն օգտաշատ կերպը որ ամէն գնահատումի արժանի է։

— Տկարակազմներու և կաթնտու մայրերու խոհանոցը վերջնականապէս կարգի մտած է։ Փոխաթուլ ծածկուած բացօթեայ սեղանատուն մը, մէջտեղը երկար սեղանով մը՝ 150 հոգիի բաւելու չափ։ Ազաթօն պէյ որ քաղաքս կը գըտնուի երկու օրէ ի վեր, տասը ոսկի նըւիրեց այս խոհանոցին ամսուան մը հացը հայթայթելու համար։ Մասնաւոր սնունդի հարցը այնքան կարեւոր ու անհրաժեշտ հարց մըն է որ պէտք է անհրաժեշտօրէն մեր մասնաւոր ուշադրութեան առարկան ընենք։ Կը մաղթեմ որ Ազաթօն պէյի այս սիրուն օրինակը տարափոխիկ բան մը ունենայ իր մէջ, որպէս զի շատ մը ուրիշներ վարակուին անով։

Թ. Գ.

ՏԵՂԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ն. Վ. Սուլթանին նախընթաց օր Գահիրէ ժամանումին առթիւ կայարանը ներկայ էին Սըր Ճ. Մաքսուէլ իր թիկնապահներով, նախարարութեանց անգլիացի խորհրդականները ևն.։ Ն. Վսեմութիւնը ձախ կողմը ունենալով Նախարարապետ Ռուշտի փաշան, կառք նստաւ և ուղղակի գնաց Աապտինի պալատը։ Ն. Վ.ը երեկ կէս օրէ վերջ Աապտինի պալատին մէջ նախագահեց Նախարարաց Խորհուրդին։

Իշխան Ահմէտ Ֆուատ, Սուլթանական Աշխարհագրական Ընկերութեան նախագահ անուանուեցաւ՝ հանգուցեալ Ապպաթ փաշայի տեղ։

Ելեւմտից նախարարութիւնը հրամայեց կառ. պաշտօնատանց սնտուկներուն որ միմիայն դրամատոմս և արծաթ դրամ վճարեն հանրութեան և հաւաքուած ոսկին ղրկեն Գահիրէի Կեդր. Գանձատունը։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՕՆԻԿ

ՀԱՅՈՑ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՊՈԼԻՍ ԵՒ ԱՅԼՈՒՐ

Պօլսեռնակ ծանօթ հայ անձնաւորութիւն մը, որ չնորհիւ կարգ մը նախախնամական պայմաններու, վերջերս յաջողած է արտասահման անցնիլ, հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ մեզ.

«Ջօհրապի սպաննութիւնը հաստատուած է. Քէլէկեան Զանդը կը գտնուի. Տօքթ. Չիլինկիրեան (Ռ. Սեւակ) սպաննուած է, իսկ կինը՝ խենթեցած. Վարուժանի համար կը վախցուի թէ սպաննուած է, Չիլինկիրեանի հետ մէկ կառքի մէջ գտնուելուն պատճառաւ։ Տօքթ. Տաղաւարեան, Ակնունի, Խաժակ, Զարդարեան և Սարգիս Մինասեան Տիգրանակերտ ղրկուեցան, բայց լուր չկայ իրենցմէ։ Մուրատ Կեսարիոյ մէջ կախուեցաւ. Գէորգ Շնորհքը մեռցուցած են Էնկիւրիի մէջ՝ աչքերուն չխլացած չամփուր զարնելով։ Նաթանեանէն լուր չկայ։ Աբիկ Մուպահեաճեան և Գ. Պէօղիկեան Գոնիա են և Երուանդ Օտեան՝ Հալէպ։ Քէլէկեան որբանոցը գոցուեցին. որբերէն 20ը գերմանական որբանոցը տարուեցան, 30ը Ատանա, միւսները Ատանուած գիտէ թէ ո՞ւր։ Սուլթանի ծննդեան տարեդարձին օրը Էնկիւրիի մէջ 1000 հայ տղայ թլփատուեցան։ Դաշտերու մէջ մարդկային կմախքներ կ'արածեն։ Պոլիս փողոցները Հայ չէք տեսներ. վաճառականները թէպէտ խանութնին կը բանան, բայց ապրանքներու մեծ մասը գրաւուած է։ Աղքատութիւնը և աղքատութիւնը անասելի են։ Գաւառացիներու մեծ մասը Պոլսէն վտարուեցաւ։ Կառավարութիւնը պաշտօնապէս կը յայտարարէ թէ Հայերէն վրէժ կը լուծէ։ Որպէս թէ Պոլիսը պիտի չպարպեն՝ որքան ատեն որ Հայերը հանգիստ մնան։ Անոնք որ իրենց կիները արտասահման ղրկեցին՝ բերել պէտք կը ձերբակալուին ու կ'աքսորուին։ Մեկնած օրս տասը Ֆրանսացի ընտանիքներ ալ աքսորուեցան։ Թուրքիոյ մէկ ծայրէն միւսը աւերակ է։ Ռումէլիի Հայերն ու Յոյներն ալ տեղահան ըրին։ Թուրքիոյ կողմէ Պուլկարիոյ թողուած հողերու բոլոր Թուրք բնակիչները Թուրքիա գաղթեցին և անոնք միւս մուհաճիրներուն հետ կը տեղաւորուին Հայերու լքուած տուներուն մէջ Իզմիր, Ատապազար և այլուր։

ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՅԵՐԸ ՀԱՅ ԱՂԷՏԻՆՀԱՆԴԷՊ

Պուէնոս-Այրէսէն լուր կը տրուի մեզ թէ, Արժանթինի փոքրաթիւ այլ կորիճ հայ գաղութը, առջի մէկ օրէն զգալով ներկայ ազգային մեծ աղէտին իրեն վրայ ծանրացուցած պարտականութեան նուիրականութիւնը, ժողով մը կը գումարէ Պուէնոս-Այրէսի մէջ, ուր ներկայ կ'ըլլան Արժանթինի ամէն կողմը ցրուած գրեթէ բոլոր Հայերը։ Այդ ժողովին մէջ, որուն քաննախօսները, խառնակին ու փղձկեցնող չխտերով հայրենիքին արիւնոտ պարունակը ուրուագծելէ յետոյ, կոչ կ'ընեն ներկաներու հայրենասիրական զգացումներուն ու անմիջապէս հանգանակութեան մը ձեռնարկելով 100 ոսկի դրամ կը գոյացնեն, զոր նոյն օրն իսկ հեռագրով կը փոխադրեն Էջմիածին, յանձնելու համար գաղթականներուն։ Յետոյ կը ձեռնարկուի կամաւորներու ի նպաստ հանգանակութեան մը, ուրկէ կը գոյանայ 140 ոսկի, որ նոյնպէս կը փոխադրուի Էջմիածին՝ Կաթողիկոսին միջոցաւ գործածուելու համար նպատակին։ Ըսենք թէ կամաւորներու ի նպաստ հանգանակութիւնը չէ փակուած դեռ ու կը շարունակէ լաւագոյն պայմաններու մէջ՝ մեծ արդիւնք տալով։

Ասկէ զատ ձեռնարկուած է նոյնպէս, Ազգ. Պաշտ. Հիմնադրամին ի նպաստ հանգանակութեան մը, որուն արդիւնքը մինչեւ նամակին թուականը, եղած է 120 ոսկի, որ պիտի ղրկուի ուղղակի Ն. Վ. Պօղոս Փաշա Նուպարի։

Այս երեք զատ-զատ հանգանակութիւնները կատարուած են միեւնոյն Յանձնախումբին կողմէ, որ անխտիր ամենքին վստահութիւնը կը վայելէ։

Միւս կողմէ կը գրեն մեզ թէ, Պուէնոս-Այրէսի մէջ կազմուած է, նոյն Յանձնախումբին հաւանութեամբ, «Հաճըն» անուն միութիւն մ'ալ, զուտ Հաճընցիներէ բաղկացած, որ արդէն ժողված է 500 ոսկի լոկ Հաճընցիներէ, որոնք Արժանթինի մէջ ընդամէնը 83 հոգի կը հաշուուին։ Անոնք կոչ կ'ընեն արտասահմանի բոլոր Հաճնցիներուն, որպէսզի իրենք ալ իրենց շրջանին մէջ նոյնօրինակ մարմիններ կազմեն և նպատակին մասին թղթակցին իրենց հետ։

ՀԻՄՆԴՐԱՄ
ԱԶԳ. ՇԱՀԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Ֆօքսանի եւ շրջակայից ցուցակ

Վսեմ. Պօղոս Նուպար փաշա Ֆօքշանի Հանգանակիչ Մասնախումբէն ստացած է ռումանական 2300 լէյ, որուն մանրամասն ցուցակը ստորեւ կը դնենք։ Հանգանակութեան համագումարը եղած է 2499 լէյ, որմէ 199 ֆրանք ծախք եղած է։

Ֆօքշան 644, Պուչօ 280, Ռիմլիք 225, Թեքուչ 235, Պոլատ 270, Ռոման 420, Պաքու 170, Բիստրա-Նեմց 150, Օտօպէշտ 60, Վասլուի 45։ Համագումար՝ ֆր. 2499։

Պուքրէշի ցուցակ

Տեարք՝ Յ. Շաքարեան, Տօքուզեան եղբ. 200ական, Տ. Մուրատեան 150, Մ. Գանթարճեան, Մ. Տէրպէտրեան, Յ. Ղազարեան, Ա. Առաքելեան 100ական, Գ. Մանուկեան 70, Տ. Խաչմանեան 60, Յ. Պաքլաճեան 50, Լ. Շաքարճեան և Լ. Սանփանեան, Մ. Կիրակոսեան 40ական, Գ. Սուքիասեան 30, Խ. Տէր Մարկոսեան 25, Հաճի Կարապետ, Յ. Միքայէլեան, Վ. Պարոնեան, Յ. Մարտիկեան, Ե. Վարդանեան, Ա. Մինասեան, Ա. Խլմասեան, Գ. Թովմասեան, Գէորգ Թովմասեան, Կ. Պօտիկեան, Լեւոն Լանիս 20ական, Գ. Սերոբեան, Գ. Նարչոյեան, Խ. Ներսիսեան, Յ. Աճէմեան, Ա. Թովմասեան, Յ. Կարապետեան 10ական։ 13 ազգայիններ 5ական, 1 ազգային 4, 4 ազգայիններ 2ական, 1 ազգային 1։

Համագումար ֆրանք 1623։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿՈՉ
Ի. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԸ

Հայ Կարմիր Խաչի (Գահիրէ) Առողջապահական Յանձնաժողովը ճեմելեան Կոչին հրատարակութիւնը կը խնդրէ մեզմէ, «երբ կարելի է՝ գոնէ երեք անգամ»։ Սոյն ձեռնարկին մեր համակրութիւնը յայտնելու համար՝ մէկ անգամ կը հրատարակենք եւ կը յանձնարարենք մեր ընթերցողներուն կարդալ զայն «գոնէ երեք անգամ։»

Գոհունակութեամբ կ'ազդարարենք որ՝ մեր առաջին դասընթացքին հետաքրքրօրէն հետեւող 17 հայ երիտասարդները՝ փայլուն քննութենէ մը յետոյ արժանացան Սբ. Յովհաննու կարգի (order of St. John) վկայականին, Անգլ. զինուորական իշխանութեան հրամանաւ, Անգլ. Կարմիր Խաչին կողմէն։

Հայ օրիորդներ, դժբաղդաբար, բաւականաչափ թիւով չներկայացան մեր առաջին դասախօսութեանց։

Ուստի անոնց ալ վերջին առիթ մը ընծայելու մտքով, և հայ իգական սեռին պատուաբեր մասնակցութիւնը գործնականօրէն մարդասիրական գործի մը ապահովելու համար՝ Բժշկական Յանձնախումբը որոշեց մօտ օրէն ձեռնարկել Երկրորդ դասընթացքի մը Հիւանդապահի Պատրաստութեան համար։

Արդ, ներկայիս կոչ կ'ընենք բարեսիրտ և անձնուրաց հայուհիներու գալ արձանագրուիլ, Ազգ. Մանկապարտէզի մէջ, ամէն օր (կիրակիէն զատ) ժամը առաւօտեան 9-10։ Արձանագրութիւնը պիտի սկսի Նոյ. 8ին և պիտի փակուի 20ին։

Ներկայացողները պարտին ըլլալ առողջ և առնուազն 21 տարեկան, ու գիտնան գրել և կարդալ, գոնէ հայերէն։

Պատերազմի միջոցին, այլ մանաւանդ անոր դադրելէն յետոյ, բարեբար գործունէութեան մեծ առիթներ պիտի ներկայանան մեր երկսեռ հիւանդապահներուն, որոնց մէկ քանիին անձնուէր ծառայութիւնները արդէն մեծապէս կը գնահատուին Հայ Կարմիր-Խաչի հիւանդանոցին մէջ ի Բօր-Սայիտ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԵՐ

Սերպիական ճակատէն

250,000 ՌՈՒՍ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

Լոնտոն, 31. — «Պէրլինէր Թակէպլաթ» կ'իմացնէ թէ Զօր. Տաւլիտօֆի հրամանատարութեան տակ 250,000 հոգինոց ռուս բանակ մը մեկնած է Պուլկարիա երթալու համար։ Ա.Հր.

Լոնտոն, 30. — Պէրլինէն կ'իմացնեն թէ ռուսական մեծ ուժեր Օտէսայէ և Սեւաստոպոլի նաւահանգիստներէն ելլելով ուղղուած են դէպ ի պուլկար ծովեզերքը, յածանաւերէ, թորփիլանաւերէ և հակաթորփիլանաւերէ բաղկացած զօրաւոր նաւատորմիղի մը պաշտպանութեան տակ։ Վառնայի ամրակոծութիւնը այս զինուորները ցամաք հանելու նախապատրաստութիւնն է։

Լոնտոն, 31. — Քոբէնհակէն հեռագիր մը կ'իմացնէ թէ Սեւ ծովու մէջ կարեւոր նաւամարտ մը տեղի ունեցած է ռուս և թուրք նաւատորմիղներուն միջեւ։ Արդիւնքը անծանօթ է։ Թրքական նաւատորմը բաղկացած էր «Եէօպէն»էն, «Պրէսլաու»էն և «Համիտիէ»էն։ Ռուս. նաւատորմը կազմուած էր 3 յածանաւերէ, բազմաթիւ թորփիլանաւերէ, հակա-թորփիլանաւերէ և ուրիշ նաւերէ։

Լոնտոն, 1. — Այսօր կ'իմացուի թէ «Եէօպէն» և թրքական նաւատորմիղէն ուրիշ միութիւններ Վառնայի ծոցը մտած են։ Մօք.

Լոնտոն՝ 31. — Աւստրիական պաշտօն. զեկոյց մը կ'ըսէ թէ Սերպերը զիրենք սեղմած են Վիշեգրատի և Բովելի շրջանները պարպել։ Բրակէվաձի հիւս-արեւմտ. կողմը հաստատուած դիրքի մը առջեւ մեծ ճակատամարտ մը տեղի կ'ունենայ։ Զեկոյցը կ'ըսէ թէ Սերպերը հերոսաբար կը կռուին բոլոր պատերազմի դաշտերուն վրայ։

Լոնտոն, 31. — Գերմանացիք Ըսթրաձինայի վրայ յարձակումի սկսան։ Պուլկարները կը յաւակնին թէ Քնիաժէվածի հարաւ-արեւմտեան կողմը Թիմօքի հովտին մէջ յառաջացումներ կատարած են։ Մօք.

Լոնտոն, 30. — Պուլկարները կ'իմացնեն թէ իրենց գծէն դէպ ի արեւմուտք յառաջացման ատեն Քօսօվայի դաշտին մէջ Մաթիանիքի գաւառը հասած են։

Բարիզ, 31. — «Էքօ տը Բարի» լուր կուտայ թէ Սերպօ-պուլկար ճակատին վրայ և Կէվկէլի մէջ շարունակաբար զինուոր և պարէն կը հանեն։ Ռ.

ԳԱՐԱՏԱՂ

Լոնտոն 31. — Գարատաղէն ուղարկած հեռագիրները կը յիշատակեն թէ Տրինայի վրայ զօրաւոր կռիւներ տեղի ունեցած են Աւստրիացիներու և Գարատաղցիներու միջեւ ուրտեղ Աւստրիացիք ետ մղուած են ծանր կորուստներով։

Լոնտոն, 30. — Գարատաղցիք գրաւեցին Սօճա-կորան որ ռազմագիտական մեծ կարեւորութիւն ունեցող դիրք մըն է և Պօսնայի մէջ Վիշկրատի շրջանին վրայ կ'իշխէ։ Մօք.

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԷՋ

Լոնտոն, 31. — Պուլկար կառավարութիւնը ձերբակալած է Սթամպոլիյսքի և ուրիշ բազմաթիւ կուսակցապետներ որոնց քաղաքականութիւնը թագաւորին հակառակ եղած էր։ Ասոնք ամենքն ալ ցկեանս բանտարկութեան դատապարտուեցան։ Մօք.

Լոնտոն, 29. — Պուլկար կառավարութիւնը Տէոտորովի խմբական հիւպատոսը ձերբակալելով Սօֆիա ուղարկած է։ Մօք.

Լոնտոն, 31. — Գերմանիոյ կայսրը Երկաթեայ Խաչի պատուանշանը շնորհեց Ֆէրտինանտ Զարին երկու տղայոցը՝ Պօրիս և Սիրիլ իշխաններուն, ինչպէս նաեւ Պուլկար վարչապետ Պ. Ռատոսլաւօֆի։ Մօք.

Թուրքիոյ մէջ

Աթէնք, 31. — Թուրք կառավարութիւնը մինչեւ Հոկտ. 25 չի ներկայացող փախստական զինուորներու ընտանիքները պիտի աքսորէ։ Այս միջոցը կը վերաբերի դրօշի տակ կանչուած փախստականներուն։ Ա.Ժ. Հ.

Լոնտոն, 29. — Պոլիս գիշերները չի լուսաւորուիր։ Քաղաքապահ զօրքը պուլկար ճակատը մեկնեցաւ։ Մօք.

Լոնտոն, 29. — Թուրքիոյ Սուլթանը Պոլսին ինքնագիր մէկ նամակը ընդունած է Աւստրիական փոխանորդ Տօլլէի միջոցաւ։

Աթէնք, 2. — Մէթէրնիխ իշխանը Պոլսոյ գերման դեսպան անուանուեցաւ, վերջերս մեռած Պարոն Վանկէնհայմի տեղ, որուն մարմինը Թարապիա թաղուեցաւ։ Ա.Ժ. Հ.

Լոնտոն, 30. — Թուրքիոյ պիւտճէին բացը 270 միլիոնի հասած է։ (Հաւանականաբար ղրշ.)։ Մօք.

Լոնտոն, 30. — Պոլիսէն կ'իմացուի թէ Ահմէտ Ակիւչի (Աղայէֆ?) համբային կրթութեան նախարար անուանուած է։ Նոյնպէս կ'իմացուի թէ վերջերս Երեսփ. ժողովի նախագահ ընտրուած Խալիլէի կուսակալ Հաճի Ատիլ պէյի տեղ Պասրի պէյ ընտրուած է իբր կուսակալ։ Մօք.

Արեւմտեան ճակատէն

ԶՕՐ. ԺՕՖՐԸ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

Լոնտոն, 30.— Դաշնեցեան պատգամաւորութիւն մը բաղկացեալ Պ. Պ. Ասքուիթէ, Պալֆուրէ և Լորտ Քիչնէրէ խորհրդակցութիւն մը ունեցաւ Զօր. Ժօֆրին հետ։ Յետոյ, Պ. Լոյտ Ճորճ և Զօր. Ժօֆրը խորհրդակցեցան։ Ռ.

Բարիզ. 31. — Զօր. Ժօֆրը Ֆրանսա վերադարձաւ։ Իր Լոնտոն այցելութիւնը Պ. Պրիանի գործօն քաղաքականութեան առաջին պտուղներէն մէկն է։ Զօր. Կալիէնի մեծ հռչակ տուաւ Բարիզի պաշտպանութեան մասին իր ըրած կազմակերպութիւններուն համար։

Լոնտոն, 30. — Զօր. Ժօֆր Լոնտոնի զինուորական իշխանութիւններու հետ իր բանակցութիւնները կը շարունակէ։ Այն ծրագիրներուն մէջ, որոնց իրագործման ուժ կուտայ Զօրավարը, կ'երեւի ընդհ. տնօրէնութեան մը տեղծումը որ պաշտօն պիտի ունենայ պատրաստել և որոշել Դաշնակիցներու զինուորական քաղաքականութեան ընդհ. յատակագիծները որպէսզի բոլոր գծին վրայ անոնց կատարեալ միատարրութիւն մը տրուի։ Մօք.

Լոնտոն, 1. — Կ'իմացուի թէ Զօր. Ժօֆրի Լոնտոն այցելութեան նպատակն է Պալքանեան պատերազմը լաւ կերպով վերջացնելու միջոցները ուսումնասիրել։

Լոնտոն, 30. — Քանատա որոշած է 100,000 հոգինոց նոր բանակ մը հանել։ Մօք.

Լոնտոն, 31. — Թանիւրի ճակատամարտը այս ամսուան ընթացքին մղուած կռիւներուն ամենակարեւորն է։ Ֆրանսացիք կ'ըսեն թէ Գերմանացիները Լա Պիւթի կատարը հասած են, բայց ուրիշ ամէն կողմ ծանր կորուստներով ետ մղուած են։ Միւս կողմէ Պերլինի մէջ հրատարակուած պաշտ. զեկոյց մը կ'իմացնէ թէ Գերմանացիք 1200 Ֆրանսացի գերի բռնած են, որոնք հաւանականաբար վիրաւորեալներ ըլլալու են։ Գերմանացիք կ'ըսեն նաեւ թէ Նէօվիլ-Սէն-Վաաթի շրջանին մէջ յառաջացած են։

Բարիզ, 2. — (Անթիլ Հ.ավ) Պէլճիքայի մէջ Լօմպարթզէտի շրջանը, գերման խիստ կռպեւոր ամբակոծութիւն մը կատարուեցաւ. ընկերակցութեամբ յարձակման անիբեւ պատրաստութեան մը՝ սակայն ֆրանս. հրետանիին արագ միջամտութիւնը արգիլեց անոր շարունակութիւնը։ Շամբանիի մէջ նոյնպէս բոլոր ճակատին վրայ 193 կողին և Թահիւրի միջեւ, ինչպէս նաեւ գիւղին հարաւակողմը, Գերմանացիք Ֆրանս. դիրքերը ռմբակոծեցին, իրենց խրամները լեցուցին և ասոր համար սանդուխներ զետեղեցին բայց Ֆրանս. մարտկոցներու և գնդացիրներու կրակը պարպեցուց յարձակման այս փորձը կամ կեղծիքները։

Արեւելեան ճակատէն

Լոնտոն, 30.—Գերմանացիք կ'ընդունին թէ Ռիկայի հարաւակողմը Ռուսերու մղած յարձակումներ զիրենք քաշուիլ ստիպած են։ Մօք.

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԿԻՊՐՈՍԸ ՉՈՒԶԵՐ

«Թայմզ» 22 հոկտ. թուականով կ'ըսէ թէ Յոյն կառավարութիւնը մերժած է Անգլ. կառավարութեան առաջարկը որ էր Կիպրոսը Յունաստանի տալ՝ պայմանաւ որ ան Դաշնակիցներու կողքին պատերազմի մտնէր։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Սերպիական ճակատէն

Բարիզ, 1.— Զեկոյց մը կ'իմացնէ թէ Թրիփոլիի ուղղութեամբ ճեղքում մը կատարող Պուլկարները մեր յառաջացեալ դիրքերուն հանդիպելով ետ քաշուեցան։ Ռ.

Նիշ, 3 (Պաշտ.).—Ետ մղեցինք թշնամիին (աւստրօ-գերման) յարձակումները՝ զայն նետելով Լէպէնիա եւ Մորավա գետերուն աջ եզերքը եւ ծանր կորուստներ պատճառելով անոր։ Հ.

Բարիզ, 1.— Սերպ դեսպանը յայտարարեց թէ Սերպիա ապահովապէս պիտի վայելէ Դաշնակիցներուն իրական գործակցութիւնը։ Սերպ բանակը մինչեւ իր վերջին զինուորը պիտի կռուի։ Իր հրամանատարները արդիւնքին մասին վստահ են, նկատի առնելով թշնամիին ջանքերուն որ միամտաբար երեք ճակատէ յարձակելու վրայ է։

Արեւմտեան ճակատէն

Բարիզ, 2. — Զեկոյց մը Նէօվիլ-Սէն-Վաաթի մէջ զօրաւոր ռմբաձգութիւն, խրամային եւ զինուորական ... կը յիշատակէ։ Սոմի հարաւակողմը Ֆրանսացիները գերման խրամները տակն ու վրայ ըրելով թշնամի օգնազօրքերը ռմբերով ողողեց։ Գերմանացիք անյաջող կերպով բազմաթիւ ականներ պայթեցուցին Արկոնի մէջ առանց Ֆրանս. ամրութիւններուն վնաս պատճառելու։ Ֆրանս. հետեւակազօրքի կրակը թշնամիին զազրածեւ յառաջամատերուն մէջ մեռցնելը արգիլեց։

ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՎԻՃԱԿԸ

Լոնտոն, 1.— Թագաւորը այս իրիկուն Պրքինկհէմի պալատը հասաւ։ Թէպէտ համբորդութենէն շատ յոգնած՝ բայց վիճակը գոհացուցիչ է։

Լոնտոն, 2.— Խորհրդարանը լեցուն էր եւ կ'սպասէր ընդհ. կացութեան վրայ Պ. Ասքուիթի ընելիք յայտարարութիւններուն։ Նախարարապետը ջերմ ծափերով ընդունուեցաւ։ Նախ իր ցաւը յայտնեց թագաւորին արկածին առթիւ, բայց երջանիկ էր ըսելով թէ Ն. Վեհափառութեան ճնշումները ո՛ եւ է ծանր հանգամանք չունէին։ Աւելցուց թէ թագաւորին հաւասած էր խորհրդարանին եւ երկրին զգացած յարգանքն ու սէրը (ջերմ ծափեր)։

Լոնտոն, 31.— «Օպսէրվըր» կը յայտնէ թէ պատերազմ. նախարարութեան վերակազմութիւնը անհրաժեշտ է։ Պէտք է նոր պաշտօնատուն մը հիմնել օգնելու համար Լորտ Քիչնէրի՝ որմէ անկարելին պահանջուեցաւ գուրդ։ Ընդհ. սպայակոյտի մը գոյութիւնը, ան կարող զինուորականներէ զըլխաւորութեամբ, աւելի կորեւոր է քան զինւ. դաշնիքի մը ստեղծումը։ Ռ.

Արեւելեան ճակատէն

Պետրոկրատ, 1.—Զեկոյց մը կ'իմացնէ թէ Գերմանացիք դարձեալ ետ մղուած են հրետանիի եւ հրացանակիրներու բուռն կրակէ մը։ Գերմանացիք Զարթօրիսքի հիւսիս-արեւմտ. կողմը յարձակողականի սկսան, սակայն ետ մղուեցան։ Այն ատեն Ռուսք հակայարձակումով մը 1400 Աւստրիացի գերի առին։ Նոյն ձեւով, Ռուսք յաղթող ստիպման բրին թշնամին եւ Բօմառոլօյի արեւմտեան խրամներուն տիրացան։ Զեկոյցը կ'աւելցնէ թէ Թառնաբոլի մօտ նաւաստիներ մը կը մղուէր ի նպաստ Ռուսերուն, որոնք մեւշին սակ ծածկուած թշնամւոյն խրամներուն վրայ խուժելով գիւղ մը գրաւեցին եւ զայն պաշտպանողներուն մեծ մասը սուինէ անցուցին։ Ռուս բորփիլանաւ մը ջրասուզանակ մը ընկղմեց. որուն օդաչուները գերի տարուեցան։

ՏՆՏԵՍԱԿԱՆ Տպարան
Մ. ՏԱՄԱՏԵԱՆ
Imp. Economique, A...

ՍԱԿԱՐԱՆ

3 Նոյեմբեր 1915

ԲԱՄՊԱԿ		Բացում	Փակում
	Նոյ.	17 11]32	17 31]32
	Յունվար	17 15]16	18 1]4
	Մարտ	18 1]4	18 9]16
	Նոյ.(1916)	17 17]32	17 13]16
ԲԱՄՊԱԿԻ ՀՈՒՆՏ			
	(3 ամիս)	107 30]40	108
	(2 ամիս)	109 20]40	110 10]40

ԱՐԺԵԹՈՒՂԹ

Թրքսի Փօնաիք	1886	Ֆր. 289.—
» »	1903	» 239.—
» »	1911	» 244.50
Ռումէլի Երկաթուղի		» 130.—
Փանամա		» 89.50